ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (14.06.2022)

Վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2022 թվականի հունիսի 14-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին
ՀՀ ԿԲ նախագահ Մ. Գալստյանը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալներ Ն. Երիցյանը և Հ. Խաչատրյանը, խորհրդի անդամներ Ա. Ստեփանյանը, Հ. Ղահրամանյանը, Դ. Նահապետյանը, Ա. Մանուկյանը, Լ. Սահակյանը

Խորհրդի նիստը սկսվեց հունիսի 14-ի դրությամբ Իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային, ֆինանսական և դրամավարկային հատվածների զարգացումները: Քննարկման առանցքային թեմա էին ռուս-ուկրաինական շարունակվող հակամարտության, Ռուսաստանի տնտեսության նկատմամբ կիրառվող տարբեր պատժամիջոցների և ՀՀ հիմնական գործընկեր երկրների ու հատկապես Հայաստանի տնտեսության, ինչպես նաև ֆինանսական շուկաների վրա հնարավոր ազդեցությունների ուղղությունների, չափի, տևականության գնահատականները:

Արձանագրվեց, որ 2022 թ. մայիսին գրանցվել է 0.1% գնաճ՝ նախորդ տարվա նույն ամսվա 0.4% գնանկման փոխարեն: Ամսվա գնաճին հիմնականում նպաստել են ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների՝ համապատասխանաբար 0.6% և 0.8% աճերը, իսկ պարենային ապրանքների գները նվազել են 0.6%-ով: Հատկապես մեծ աճ է արձանագրվել «Տրանսպորտ», «Հանգիստ և մշակույթ», «Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն» և «Բնակարանային ծառայություններ» ենթախմբերի ապրանքների գներում՝ ընդհանուր հաշվով 4.4%, որը, համաձայն գնահատականների, կրել է ծառայությունների ճյուղում պահանջարկի էական ավելացման ազդեցությունը: Բարձր գնաճ է արձանագրվել նաև «Յուղեր և ճարպեր» ու «Ծխախոտային արտադրատեսակներ» ենթախմբերի գներում՝ համապատասխանաբար 3.4% և 3.0%: Ամսվա ընթացքում դիտվել է «Բանջարեղեն», «Միրգ» և «Կաթնամթերք, պանիր և ձու» ենթախմբերի գների նվազում՝ համապատասխամաբար 5.4%, 0.7% և 2.7%: ***Այս փոփոխությունների արդյունքում 12-ամսյա գնաճն ավելացել է և ամսվա վերջին կազմել 9.0%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս ավելացել է՝ կազմելով 8.4%***:

Ներկայացվեցին արտաքին հատվածի ընթացիկ զարգացումները: Արձանագրվեց, որ ռուս-ուկրաինական հակամարտության, Ռուսաստանի տնտեսության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների և դրանցից ածանցվող բարձր անորոշության պահպանման ազդեցությամբ ՀՀ հիմնական գործընկեր երկրներում շարունակվում են տնտեսական ակտիվության տեմպերի դանդաղման միտումները: Դրան զուգահեռ, արժեշղթաների պահպանվող խաթարումների հետևանքով, միջազգային ապրանքահումքային շուկաներում, ինչպես նաև գործընկեր երկրներում դիտվում է գնաճային միջավայրի շարունակական ընդլայնում: Նման իրավիճակում գործընկեր երկրներից ԱՄՆ ԴՊՀ-ն և ԵԿԲ-ն, գնաճը միջնաժամկետ հատվածում թիրախային մակարդակ վերադարձնելու և գնաճային սպասումների ապախարսխման ռիսկերը կառավարելու նպատակով, նախանշում են վարել սպասվածից ավելի խիստ դրամավարկային քաղաքականություն: Ռուսաստանում, հակամարտության սրման սկզբնական փուլում, ՌԿԲ-ի կտրուկ արձագանքման և կապիտալի ու դրամավարկային պայմանների խստացման արդյունքում գնաճը և գնաճային սպասումներն էականորեն նվազել են, ինչը թույլ է տալիս ԿԲ-ին շարունակաբար թուլացնել դրամավարկային պայմանները՝ նպաստելով տնտեսության հետագա կառուցվածքային վերափոխումների սահուն ընթացքին:

Խորհուրդը քննարկեց ՀՀ տնտեսության զարգացումները և արձանագրեց, որ 2022 թ. երկրորդ եռամսյակում ևս շարունակվում են տնտեսական ակտիվության բարձր աճի միտումները՝ պայմանավորված ծառայությունների և շինարարության ճյուղերի բարձր աճերով: Ծառայությունների ոլորտի աճին շարունակում է նպաստել ռուս-ուկրաինական հակամարտության պահպանման պայմաններում դեպի Հայաստան միջազգային այցելուների և ֆինանսական մեծածավալ ներհոսքը: Ամբողջական պահանջարկի կառուցվածքում դիտվում է նաև ներքին պահանջարկի արագացում՝ պայմանավորված «հետաձգված» մասնավոր ծախսումների վերականգնվող աճով: Նշվեց նաև, որ 2022 թ. ներքին պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության գնահատականը, ինչպես նախանշվում էր դրամավարկային քաղաքականության առաջին եռամսյակի ծրագրում, շարունակում է մնալ զսպող:

Քննարկվեցին ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները և արձանագրվեց, որ երկրորդ եռամսյակում շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքները ձևավորվել են քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Միաժամանակ, միջազգային այցելուների կողմից ներքին ծառայությունների նկատմամբ պահանջարկի (արտաքին պահանջարկի) զգալի աճի և արտերկրից ֆինանսական փոխանցումների մեծ ներհոսքի ազդեցությամբ ՀՀ արժութային շուկայում դիտվում է դրամի արժևորում: Միաժամանակ, նման մեծածավալ

հոսքերի պայմաններում արժութային շուկայում դիտարկված կարճաժամկետ խաթարումների և խնդիրների չեզոքացման նպատակով ԿԲ-ն արժութային շուկայում ունեցել է փոքր չափով իրավիճակային միջամտություն՝ նպաստելով ֆինանսական շուկայի բնականոն գործունեությանը:

Անդրադառնալով ձևավորված գնաճային միջավայրին և գնաճային սպասումներին՝ Խորհուրդն արձանագրեց, որ երկրորդ եռամսյակում գնաճային միջավայրն ընդլայնվել է, որին համահունչ որոշակի արագացել են նաև գնաճային սպասումները: Դրան շարունակում է նպաստել համաշխարհային արժեշղթաների խաթարումների հետևանքով ապրանքահումքային միջազգային շուկաներից՝ ներմուծվող մի շարք ապրանքների միջոցով ներքին գներին փոխանցվող գնաճային ազդեցությունը: Գնաճին նպաստում են նաև հատկապես ծառայությունների ոլորտում ամբողջական պահանջարկի դրական զարգացումները, այդուհանդերձ գնահատվում է, որ որոշ «կոշտ» ծառայությունների գներ առաջին եռամսյակում արդեն իսկ էականորեն ճշգրտվել են, ուստի այդ ոլորտում գների հետագա ճշգրտումը որոշակիորեն կդանդաղի: Մյուս կողմից՝ ակնկալվում է, որ դրամի փոխարժեքի արժևորումը աստիճանաբար դրական ազդեցություն կփոխանցի արտաքին պահանջարկի ճշգրտման, ներքին գնաճային միջավայրի թուլացման ու գնաճային սպասումների նվազման ուղղությամբ:

Իրավիճակային հաշվետվության և արտաքին ու ներքին մակրոտնտեսական զարգացումների քննարկումից հետո Խորհուրդն անցավ դրամավարկային քաղաքականության ուղղությունների քննարկմանն ու քաղաքականության տոկոսադրույքի որոշման կայացմանը: Կանխատեսող թիմը Խորհրդին էր ներկայացրել վերոնշյալ միջավայրում առաջիկա մակրոտնտեսական զարգացման հեռանկարների և դրամավարկային քաղաքականության խստացումը շարունակելու սցենար: Խորհրդի առանձին անդամներ համակարծիք էին, որ գնաճային գործոնները և ապագայում նշմարվող ռիսկերը գերակշռում են, ուստի անհրաժեշտ է շարունակել դրամավարկային քաղաքականության հետևողական խստացումը և քաղաքականության տոկոսադրույքի բարձրացումը: Սակայն Խորհրդի անդամների մեծամասնության կարծիքով ներկայիս գնաճի գործոնների կազմում գերակշռում են համաշխարհային գնաճային երևույթների և արտաքին պահանջարկի ազդեցությունները, որոնք ՀՀ դրամի զուգահեռաբար ընթացող արժևորման ներքո առաջիկայում կթուլանան՝ չեզոքացնելով գնաճի ու գնաճային սպասումների հետ կապված ռիսկերը: Ելնելով այս դատողություններից և այն հանգամանքից, որ դրամավարկային պայմանների նախորդ՝ համեմատաբար մեծ քայլով խստացումը բավարար արձագանք էր բարձր գնաճային միջավայրի մեղմման ուղղությամբ՝ նրանք նպատակահարմար էին գտնում ձեռնպահ մնալ տոկոսադրույքի փոփոխությունից:

Այսպիսով՝ ***ԿԲ խորհուրդը ձայների մեծամասնությամբ որոշեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ:*** Այս ամենով հանդերձ՝ ԿԲ Խորհուրդը կարևորում էր համարժեք գործողություններով գնաճի կայունացում ապահովելու և գնաճային սպասումների ապախարսխման ցանկացած ռիսկ չեզոքացնելու իր հետևողականությունը: Կանխատեսվում էր, որ նման քաղաքականության արդյունքում 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի և միջնաժամկետ հորիզոնում կմոտենա նպատակային 4% ցուցանիշին:

ԿԲ խորհուրդը գնահատում էր, որ աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված մակրոտնտեսական հեռանկարի հետ կապված բարձր անորոշությունը դեռևս պահպանվում է: Միաժամանակ, առկա են կանխատեսված ուղեգծից գնաճի շեղման ռիսկեր, որոնք հիմնականում հավասարակշռված են: Դրանք հիմնականում հանգում են ցամաքային ճանապարհով ՀՀ-ից ապրանքների արտահանման և ներմուծման տրանսպորտային բեռնափոխադրումների հետ կապված խնդիրներին, միջազգային արժեշղթաների խաթարումների համաշխարհային ազդեցություններին, ինչպես նաև դրամի արժևորման՝ գնաճին փոխանցման ուղիների գործողությանը: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

Խորհուրդը հաստատեց ԿԲ գործիքների տոկոսադրույքների վերաբերյալ որոշումը և առաջարկվող մամուլի հաղորդագրությունը, որոնք կցվում են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՀԱՄ ԵՎ ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանել 9.25%:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը սահմանել 10.75%:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը սահմանել 7.75%:

4. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ մամլո հաղորդագրությանը (կցվում է):

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային տնային էջում հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ

14 հունիսի 2022 թ.

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
14.06.2022 թ.

2022 թ. հունիսի 14-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով 9.25%:

2022 թ. մայիսին 12-ամսյա գնաճն ավելացել է և կազմել 9.0%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս ավելացել է՝ կազմելով 8.4%:

Ռուս-ուկրաինական հակամարտությունը շարունակում է բացասաբար անդրադառնալ ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսական և ֆինանսական շուկայի զարգացումների վրա: Համաշխարհային արժեշղթաների պահպանվող խաթարումները և միջազգային ապրանքահումքային շուկաներում գների շարունակական աճը հանգեցնում են համաշխարհային գնաճային միջավայրի ընդլայնմանը: Զարգացած երկրների կենտրոնական բանկերը նախանշում են դրամավարկային քաղաքականության համեմատաբար ավելի արագ տեմպերով խստացման մասին: Այսպիսով՝ արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունը դեռևս պահպանվում է:

2022 թ. երկրորդ եռամսյակում պահպանվում է ՀՀ տնտեսության բարձր ակտիվությունը: Միջազգային այցելուների զգալի ներհոսքը և ներքին մասնավոր ծախսումների աճը նպաստում են ծառայությունների ճյուղի և ամբողջական պահանջարկի ավելացմանը: Սա հանգեցնում է ընդհանուր գնաճային միջավայրի ընդլայնմանը և գնաճային սպասումների աճին: ՀՀ ծառայությունների արտահանման էական աճը և ֆինանսական ներհոսքը նպաստում են նաև արժութային շուկայում դրամի արժևորմանը: Գնահատվում է, որ առաջիկայում վերջինս դրական ազդեցություն կփոխանցի ներքին գնաճային միջավայրի թուլացման ուղղությամբ:

Սրեղծված իրավիճակում Խորհուրդը նպատակահարմար է գտնում քաղաքականության տոկոսադրույքը թողնել անփոփոխ: ԿԲ խորհուրդը հետևողական է լինելու՝ համարժեք գործողություններով ապահովելու գնաճի կայունացում և չեզոքացնելու գնաճային սպասումների ապախարսխման ցանկացած ռիսկ: Կանխատեսվում է, որ 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի և միջնաժամկետ հորիզոնում կմոտենա նպատակային 4% ցուցանիշին:

ԿԲ խորհուրդը գնահատում է, որ աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված մակրոտնտեսական հեռանկարի հետ կապված բարձր անորոշությունը դեռևս պահպանվում է: Միաժամանակ, կանխատեսված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի՝ որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

Կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայություն